Կրնայ առարկուիլ, թէ մասնակցութեան տոկոսը շատ բարձր չէր Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան մէջ: Արդարեւ, ըստ Կեդրոնական Ընտրական Յանձնախումբի պաշտօնական տուեալներուն, ընտրելու իրաւունք ունեցող քաղաքացիներուն մօտաւորապէս 60 տոկոսը մասնակցած է քուէարկութեանց: Շրջանային տարբեր գործումով՝ գլխակալ շրջակներուն մէջ շատ աւելի բարձր էր զ՝ մասնակցութիւնը, քան յատկապէս Ստեփանակերտի մէջ:

60 տոկոսի շուրջ մասնակցութիւնը, համեմատած ժողովրդավարութեան առումով բաւական երկար ճամբա կտրած Արեւմուտքի շատ մը երկիրներու հետ, ինքնին բաւական բարձր ցուցանիչ է: Սակայն յստակ է մէկ բան. որ ընտրական ժխտական փորձառութիւնները իրենց անխուսափելի ազդեցութիւնը կ'ունենան մասնակցութեան տոկոսի նուազեցման վրայ եւ հասարակ այս իրողութեան, Արցախի հայութիւնը իր մէջ գտաւ կրաւորական կեցուածքէ իստակալ տեղաբաժնէ շուրջ եւ գործած մասնակցութիւն ունեցաւ ընտրական իր իրաւունքի կիրառումին մէջ:

Այս առումով, Արցախը, իր պետական կառոյցներով ու ժողովուրդով անհրաժեշտ թելադրանքը կը կատարէ Հայաստանի համապատասխան մարմիններուն եւ ժողովուրդին:

Աւելորդ չէ անգամ մը եւս ընդգծել այն իրողութիւնը, որ ազատ եւ արդար ընտրութիւններով յառաջացած խորհրդարան մը լաւագոյն կը ներկայացնէ ինք ընտրած ժողովուրդը եւ առ այդ՝ երկրի ժողովրդավար հաստատութիւնները աւելի առողջ ու կենսունակ կրնան դառնալ: Նման խորհրդարան մը լաւագոյն ձեւով կրնայ կատարել օրէնսդիր իշխանութեան մը ակնկալուող պարտաւորութիւնները, ոչ միայն օրէնքներու որդեգրումը իմաստով, այլ նաեւ՝ գործադիր իշխանութեան աշխատանքներուն գծով հաշիւ պահանջողի ու նախկինողի առումով:

Այս խորհրդարանական ընտրութիւններով Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը քայլ մը եւս կը նուաճէ ինքնահաստատման ու իր կառոյցները ամբարտնջելու համար մը բարձրացնէ նաեւ մեր ակնկալութիւններու մակարդակը: Յունալից՝ կը սպասենք:

«ԱՍՊԱՐԷՋ»

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՆԸ ՊԵՏԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԿԱՅԱՅՄԱՆ ՃԱՆԱՊԱՐՏԻՆ Է»

Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան խորհրդարանական վերջին ընտրութիւններուն ընթացքին Արցախ կը գտնուէր Հ. Յ. Դ. Հայաստանի կազմակերպութեանց պատուիրակութիւն մը, Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի Գերկայացուցիչ եւ Ազգային Ժողովի պատգամաւոր Արմէն Ռուստամեանի գլխաւորութեամբ:

Հայրենի «Երկիր» թերթը հարցազրոյց մը ունեցաւ Արմէն Ռուստամեանի հետ, որ իր կարգին արտայայտեց Դաշնակցութեան կեցուածքը ընտրական գործընթացին եւ արդիւնքներուն առնչութեամբ:

Ստորեւ կու տանք հարցազրոյցը ամբողջութեամբ:

ՀԱՐՑՈՒՄ. - Ի՞նչ կ'ստէ՞ք Յունիսի 18ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնում կայացած խորհրդարանական ընտրութիւններին ընթացքի վերաբերեալ:

ՊԱՏԱՍԽԱՆ. - Հ. Յ. Դ. Հայաստանի պատուիրակութիւնը Յունիսի 18-19ը գտնուում էր Լեռնային Ղարաբաղում: Մենք այցելել ենք զրեթիլ րոյոր ընտրատարածքները, հետեւեալ ընտրութիւններին ընթացքին: Յանգեցինք այն եզրակացութեան, որ բացառութեամբ մէկ-երկու ոչ նախկին խախտումներ, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնում խորհրդարանական ընտրութիւններն անցել են բարձր մակարդակով: Արցախի ժողովուրդը իրօք իրականացրեց ազատ եւ թափանցիկ ընտրութիւններ: Նոյն կարծիքն են արձանագրել նաեւ արտասահմանեան տարբեր երկրներից դիտորդական աուպերութեամբ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն ժամանած 52 պատուիրակները:

Հ. - Մասնակցութեան առումով ինչպիսի՞նք էր ընտրողների աշխուժութիւնը:

Պ. - Բաւական բարձր: Հանրապետութեան ամբողջ տարածքում քուէարկութեանը մասնակցել է ընտրողների 60 տոկոսը: Դա բաւական մեծ ցուցանիշ է: Բացառութիւն էր կազմում Ստեփանակերտը, ուր ընտրողների մասնակցութիւնը կազմեց 33 տոկոս: Դա հիմնականում պայմանաւորուած էր նրանով, որ քաղաքի բնակչութիւնը աւանդաբար կրաւորական է, ի տարբերութիւն գիւղերի բնակչութեան:

Հ. - Մարտի 22ի միջալեզույց յետոյ ստեղծուած միջուկային որոշակի կիրպով շունչադարձումը ընտրութիւններին ընթացի վրայ:

Պ. - Ի հարկէ, Արցախում Մարտի 22ից յետոյ քաղաքական իրավիճակը զգալի փոխուել է, բայց դա որեւէ կերպ չանդարձաւ ընտրութիւնները: Կարծում եմ, որ այս րնտ-

ընտրութիւններին վրայ եւ որեւէ կերպ չխոչընդոտեց վերջինիս ազատ, թափանցիկ անցկացմանը: Ի զհէ, նշեմ, որ ընտրութիւններին, որպէս պատգամաւորութեան թեկնածու, մասնակցում էր նաեւ Սամուէլ Բարաբեանի համախոհ Մուրատ Պետրոսեանը: Նրան չյաջողուեց հաւաքել անհրաժեշտ թեւով ձայներ: Պէտք է նշեմ, որ իշխանութիւնների կողմից որեւէ խոչընդոտ, պարտադրանք՝ փորձելու ժային մեթոտներին կիրառումը անցկացնել համախոհներին, չի նկատուել:

Հ. - Հայաստանում կայացած ընտրութիւններին ժամանակ յայտնի են ընտրացուցակների հետ կապում մեկտեղելու արդիւնքը շեղումը շեղումը զուրկ մնում ցուցակներից: Այդպիսի երկուք նկատուեց՝ Արցախում:

Պ. - Հիմնական թերութիւններ, որ նկատուել են, կապուած են եղել ցուցակների հետ: Այդ իմաստով նման էր Հայաստանում անցկացուած ընտրութիւններին: Բայց ընդամէնը մէկ-երկու ժամ անց ընտրացուցակներից դուրս մնացածներին հնարաւորութիւն տրուեց դատարանների համապատասխան որոշմամբ վերականգնել իրենց ընտրական իրաւունքը:

Հ. - Ընտրութիւններին արդիւնքում ուժերի ի՞նչ յարաբերակցութեամբ ձեւաորոշեց Ղարաբաղի խորհրդարանը:

Պ. - Ընտրուած պատգամաւորներից ինը ներկայացուած են Դաշնակցութեան կողմից, 13ը՝ «Ժողովրդավարական Արցախ», 10ը՝ անկախ պատգամաւորներ են, իսկ մէկը՝ «Արմենակցութիւն» կուսակցութեան ներկայացուցիչ:

Հ. - Ինչպիսի՞նք ազդեցութիւն կ'ունենան ընտրութիւններին արդիւնքները քաղաքական կարգաւորման վրայ:

Պ. - Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ընտրութիւնները հենց այդ իմաստով էլ չափազանց կարեւորուում էին: Այսօր Ղարաբաղի հարցի կարգաւորման գործընթացը գտնուում է շատ աշխուժ փուլում: Ազատ, արդար ընտրութիւններին անցկացումը լուրջ յաջողութիւն կարող է հանդիսանալ հայկական կողմի համար: Ի վերջոյ, ամենակարեւոր ցուցանիշը պետութեան կայացման եւ ժողովրդավարութեան հաստատման համար եղել եւ մնում է ազատ, արդար ընտրութիւնների անցկացումը: Արդէն կարելի է ասել՝ որեւէ կասկած չկայ, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը կայացած պետութիւն է, քանի որ այնտեղ անցկացուել են միջազգային չափանիշներին, օրէնքներին համապատասխան ընտրութիւններ: Կարծում եմ, որ այս րնտ-

րութիւնները կը նպաստեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնում ստեղծուած ներքաղաքական միջնորդորտի առողջացմանը: Ազատ ընտրութիւնների արդիւնքում ձեւաւորուած Ազգային Ժողովը այդ հարցում կ'ունենայ շատ լուրջ դերակատարում:

Հ. - Ո՞ր բաղաձայն ուժը յարթակակ գրանցի արցախեան ընտրութիւններում:

Պ. - Ընդհանրապէս, չի կարելի խօսել որեւէ քաղաքական ուժի յաջողական մասին, քանի որ խորհրդարանական ընտրութիւններն Արցախում, օրէնսդրութեան համաձայն, անցկացուել են նախադասակ մեծամասնական համակարգով, ի տարբերութիւն Հայաստանեան ընտրութիւնների: Պատճառը քաղաքական դաշուած կուսակցութիւնների ոչ լիարժէք կայացած լինելն է: Բայց կարծում եմ, որ ժամանակի ընթացքում Ղարաբաղում եւս համասնական ընտրակարգը իր տեղը կ'ունենայ՝ կապուած քաղաքական դաշտի ձեւաւորման հետ: Յունիսի 17ի ընտրութիւնները, այդ իմաստով, լուրջ խթան կը հանդիսանան:

Հ. - Գտնուելով Արցախում, ես ինչպիսի՞նք է՞ք անդի իշխանութիւններին ներկայացուցիչներին: Մանաւանդ որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ Արիւղի Դուխանեանը նոր էր վերադարձել Արցախ:

Պ. - Հաշուել առնելով Արիւղի Դուխանեանի առողջական վիճակը՝ չկամեցանք անհանգրստացնել նրան, սակայն փոխարէն հանդիպեցինք վարչապետ Անուշաւան Դանիլեանի հետ: Խօսեցինք Մարտի 22ի շուրջ: Յայտնեցինք մեր ցանկութիւնը, որ նախաքննութիւն ընթանայ օրէնքի պահպանման սահմաններում, չստեղծուել աւելորդ լարուածութիւն, որպէսզի դատական ընթացքն ու հնարաւոր դատավճիռը հասարակութեան մէջ առիթ չտան տարակարծութիւնների: Լուրջ խօսակցութիւն է ծաւալուել նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան տնտեսական զարգացման հեռանկարների շուրջ, քննարկուել են բոլոր այն խնդիրները, որոնց առաջ այսօր կանգնած է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան կառավարութիւնը: Մեծ ուրախութեամբ պէտք է նշեմ, որ պաշտօնական տրուեցաների համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնում, ի տարբերութիւն Հայաստանի, նկատելի է ներգաղթի աճ արտագաղթի համեմատ: Սա ցայտուն ապացոյցներ է մարդկանց մօտ առկայ վստահութեան, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնը բուն էլ պետականութեան կայացման յստակ ճանապարհը:

«ԵՐԿԻՐ»

ԻՐԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

ԹՈՒՐԹԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԵՒ ՄԵՐ ԳԻՐՔՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

Ստորեւ տրուած յօդուածը թարգմանաբար յայտնած էր Թեհրանի «Ալիք» թերթի 19 Յունիսի թիւին մէջ: Յօդուածագիրը՝ Իրանի Իսլամական Հանրապետութեան խորհրդարանի անդամ զոլու. Էլահէ Զուլայի, քննադատաբար կ'անդրադառնայ Իրան-Թուրքիա յարաբերութիւններու վատթարացած վիճակին մէջ թրքական առեւտրական պատուիրակութեան մը Թեհրան այցելութեան եւ ընդհանրապէս թուրք-իրանական յարաբերութիւններու վիճակին:

Վերջին շաբաթների ընթացքում կրկին Թուրքիայի կառավարութիւնը լայն քարոզչութիւն ծաւալեց ընդդէմ Իրանի Իսլամական Հանրապետութեան, որը ցաւօք սրտի զուգարկիցեթ թուրք առեւտրականների 140 հոգիանոց պատուիրակութեան թեհրան այցելելուն:

Թուրքիան, հանդիսանալով Ամերիկայի շրջաձային քաղաքականութիւնների իրականացնող գործօն բազուկներից մէկը, Իրանում իսլամական վարչակարգի հիմնադրուելուն յաջողութեամբ տարիներին իր նպատակներն ու շահերը ապահովելու համար զանազան քաղաքականութիւններ է որդեգրել:

Գիմնականում սառը պատերազմի եւ խորհրդային Միութեան - Սիացեալ Նահանգներ քաղաքային քաղաքականութիւններ իրականացնելու ցանկանալով, Սիւրեյհն Ամերիկայի ծաւալուել ցանքերը Թեհրանի մեկուսացնելու համար Իրան - Ամերիկա գոտիներին սատարակցում էր Իրանի դէմ Իրանի պատերազմն սկսողութիւնը, յետոյ, եւ պատճառ դարձաւ, որ Յ տարի տեւած պատերազմը ընթացքում Թուրքիան ցամաքային ուղիներն օգտագործելով Իրանից Եւրոպա եւ փոխարարած ապրանքափոխարկութեան միջոցով իսլամական օգուտներն ապահովել իր համար:

Իրան - Ամերիկա յարաբերութիւնների գործընթակուցը Թուրքիայի համար շատ նպաստաւոր պայմաններ ստեղծեց այդ երկրի շահերն ապահովող զանազան գործարքների համար: 1980ական թուականների Թուրքիայի տնտեսական զարգացումներն էլ աւելացրեցին այդ երկրի կարողականութիւնը վերոյիշեալ հնարաւորութիւններից օգտուելու համար:

Խորհրդային Միութեան փլուզումը մի մեծ իրադարձութիւն էր, որը համաշխարհային հա-

մակարգի պայմանները սաստիկ փոփոխութեան ենթարկեց:

Խորհրդային Միութեան փլուզումն հետ միաստանական Թուրքիայի դրամատիկական տրամադրութիւնը նոր շուկաներ էր փնտրում եւ Միջին Ասիայի ու Կովկասի երկրների շուկաները ներկայացրին նրա ցանկացած հետաքննարկելու:

Թուրքիայի կառավարութիւնը նոյնիսկ նախքան այդ համարապետութիւններին տիրանալ Թուրքիա եւ մի ուսումնասիրութիւնների կենտրոն կազմելու խնդիրը: Թուրքիան առաջին երկիրն էր, որ Ազգայնաճանի եւ Միջին Ասիայի երկրներին պայշտուսապէս ճանաչեց: Համայնաբարական բարեկարգումների վերացման պայմաններում, երբ մի հզօր վարչաձեւ պիտի փոխարինէր նախորդին, Թուրքիան շեշտ էր դնում շրջանում ունեցած իր դերի եւ ազդեցութեան վրայ եւ բախում էր իր նախախաւանակ քաղաքակրթութեան եւ մշակութիւնի հիմնքների վրայ կառուցուած վարչաձեւին:

Միջին Ասիական ու կովկասեան ժողովուրդների հետ ունեցած Իրանի երկարատեւ յարաբերութիւնների անցեալն էր իրանա-իսլամական մշակութիւնը իր ու լայն ազդեցութիւնը այդ երկրներում Թուրքիային հարկադրեց դիմել մեծ քանքերի իր շահերն ապահովելու համար: Պէտք է իշխեցնել, որ Միջին Ասիայում եւ Կովկասում համայնավարութեան շրջանից մնացած ոչ-կրօնական ղեկավարների ընտրանից էլ պատեհ առիթ է տուել Թուրքիային եւ նորապէս Եւրոպայի ներկայացուցիչ իր ազդեցութիւնը տարածել Միջին Ասիայում եւ Եւրոպայում: Այդ համարապետութիւնների համար էլ Թուրքիային մօտենալը արժարձուել է որպէս մի լծակ Արեւմուտքին (Եւրոպային եւ Ամերիկային) մօտենալու համար:

Սկստի առնելով Իրանի Իսլամական Հանրապետութեան առանձնատարութիւնները Միջին Ասիայի երկրների համաշխարհային շուկաներին կապուելու հնարաւորութիւնը տալու գծով, որից զուրկ է Թուրքիան իր աշխարհաքաղական դիրքի եւ այդ երկրների հետ հարեպակցելու պատճառով, եւ յատկապէս նկատի առնելով այդ երկրի ներքին մտահոգութիւնները իսլամական ուղղուածութիւն ունեցող շարժումների աճի բերումով, այդ շարժումների աճը արժարձուել է որպէս մի սպառնալից:

Թուրքիայի որոշ դառն փորձառութիւնները Միջին Ասիայում պատճառ են դարձել, որ իսլամական արժատակաւորութիւնը համարի շրջաձային տնտեսական սպառնալից իր օրակարգում հիմնական կացնի Իսրայէլի հետ դաշնակցութիւնը ռազմավարութեան:

ՕՊԱՆՆԵՐԸ ի յստակօրէն շեշտել է Միջին Արեւելքում եւ նրա մերձակալ շրջաններում իսլամական հակումների տարածումը ազդեակող

Թուրքիայի դերը: Սակայն Թուրքիայի ոչ-կրօնական բնոյթը եւ իր քարոզչութիւնները իսլամական արժատակաւորութեան դէմ աղաթել չեն դարձել, որ վերոյիշեալ շրջաններում իր ազդեցութիւնը տարածելու համար կրօնական որոշ քարոզչութիւններից եւս խոսափի:

Թուրքիան, որ տարիներ յառուսակ Եւրոմիութեան փակ դռների յետեւում է կանգնել եւ ներս ընդունուելու է սպասում, ջանացել է այդ միութեան սովորութեան իրականացնելու, սակայն այդ երկրի քաղաքական-հասարակական ոչ-քաղաքական վիճակը աղաթել է եղել նրա ցանկութեան իրականացումը:

Սկստի առնելով վերոյիշեալ կէտերը եւ այն, որ Թուրքիան առաջին իսլամական երկիրն էր, որ պաշտօնապ

ՀԱՅԿԱԿԱՆ ՉԱՐՈՒԹՅՈՒՆ

ԴԷՊԻ ԲԻԻԶԱՆԴԻՈՆ ԳԱՂԹԱԿԱՆՆԱԿԱՆ ՀՈՍԱՆՔՆԵՐՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ ՀԱՅ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐ ՀԵՂԻՆԱԿԱՒՈՐ ՈՒԺ ԲԻԻԶԱՆԴԱԿԱՆ ԿԱՅՍՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Հայ - բիւզանդական յարաբերությունները, ինչպես նաև հայերու դեպի Բիւզանդիոն գաղթական կապերը հիմնականում կազմավորվել են Հայաստանի Բիւզանդիոնի եւ Պարսկաստանի միջև 387 թվականում կնքված հաշտության պայմանագրի արժեքներով: Այս պայմանագրի արժեքները հիմնականում կազմավորվել են Հայաստանի Բիւզանդիոնի եւ Պարսկաստանի միջև 387 թվականում կնքված հաշտության պայմանագրի արժեքներով: Այս պայմանագրի արժեքները հիմնականում կազմավորվել են Հայաստանի Բիւզանդիոնի եւ Պարսկաստանի միջև 387 թվականում կնքված հաշտության պայմանագրի արժեքներով:

ԼԵՆՈՆ Ա. ԿԱՅՍԵՐ ՕՐՈՎ ՀԱՅ ԱԶՆՈՒԱԿԱՆՆԵՐ ԱԶԳԵՑԻԿ ՈՒԺ ԲԱՆԱԿԻՆ ՄԷՋ

Մարկիանոս կայսեր մահէն (457) տարեկան 7 Փետրուար 457ին գահ բարձրացաւ Բարկիացի Լենոն Ա., որ բանակի բարձրաստիճան գիւնդարկաններէն էր եւ զօրավար Ասփարի օգնականը: Գահ բարձրանալէն ետք ան առաջին հերթին 1, 113 նաւերէ բաղկացած մեծ տորմիդ մը եւ հարիւր հազար զինուորներ պատրաստեց, որոնք Ասփարիէ ցամաք ելան եւ մեծ հարուած հասցուցին վանտալներուն:

Այս ժամանակ Հայաստան, Վարդանանց պատերազմէն ետք, ամբողջովին նուաճուած էր պարսկական բանակներուն կողմէ, հոգեւորականներ ու նախարարներ քշուած եւ քստրուած էին Սասանեան կայսրութեան հեռուոր շրջաններ. հայոց աշխարհը մնացած էր լքուած ու անտէր, նախարարական տոհմերը ջլատուած ու կազմալուծուած, անդունդի սեմին հասած էին. անոնց բոլոր հարստութիւնները խլուած էին. շատ մը տոհմեր իրենց կալուածներէն հեռացած եւ ապահով վայրեր քշուած էին: Հայոց աշխարհի փափկասուն տիկիները փախարհերու վրայ կը բնակային եւ անուշահամ կերակուրներու փոխարէն խոտ կ'ուտէին: Իսկ ճարտար Գուգարաց Աշուշայ բոլորիստիանոսին մէջ ապաստան գտած էին Մամիկոնեան եւ Կամարակաւ ընտանիքները, Աղան Արծրունի եւ ապագայ պատմագիր Լազար Փարպեցի:

Հայաստանի այս իրավիճակին մէջ Արշակունեաց տոհմէն երկու իշխաններ՝ Արտաւան ու Գագրիկ, իրենց ընտանիքներով ու հետեւորդներով, հաւանաբար 460ական տարիներուն հեռացան Երկրէն եւ Բիւզանդիոնի սահմաններէն ներս ապաստան գտան: Լենոն Ա. կայսր անոնց արտօնութիւն տուաւ Մակեդոնիոյ Նիկիա քաղաքը հաստատուելու: Հետագային հայ Արշակունիներու այս սերունդը տեղափոխուեցաւ Փլիլիպոսիոս (ներկայ Պուլկարիա), եւ հոն կ'է Ատրիանապոլիս: Մակեդոնիոյ մէջ հաստատուած այս հայ Արշակունիներու սերունդները հետագային հիմը դրին Բիւզանդական կայսրութեան Հայկական կամ Մակեդոնական արքայական հարստութեան:

Այսպէսով, աստիճանաբար, առանձին նախարարներ Բիւզանդիոնի սահմաններ մտնելով, գլխաւորաբար բանակին մէջ ապարեզ գտան, որուն պատճառով ալ հետզհետէ աւելի մեծ թիւով նախարարներ իրենց հետեւորդներով ու զօրքերով Բիւզանդիոն տեղափոխուեցան եւ բանակին մէջ ծառայութեան մտան, մանաւանդ որ բանակին մէջ ծառայութիւնը բաւական լաւ կը վարձատրուէր եւ զինուորները առանձին հողակտորներ ալ կը ստանային: Հայ աղիւղները բիւզանդական բանակին համար անփոխարինելի զինուորներ էին: Իսկ արքունի պահակազօրքը, որ սրուարիոս կը կոչէր եւ երբեք հազար հինգ հարիւր հոգիէ բաղկացած էր, ամբողջութեամբ հայ զինուորներէ բաղկացած էր. անոնք աւելի լաւ վարձատրութիւն կը ստանային, քան միւս զինուորները:

Միւս կողմէ, հետզհետէ աւելի մեծ թիւով հայ ուսանողներ սկսան յանձնել Պոլսոյ զբոլորոցները, եւ իրաւամբ ալ այդ ժամանակի մատենագիրները բացառիկ գովեստով արտայայտուած են Բիւզանդիոնի մասին՝ զայն կոչելով «օհան իմաստութեան»: Հոն անոնք միասին կ'ուսանէին, կը ծանօթանային եւ շփուած կ'ուսնային յոյն, ինչպէս նաեւ աշխարհի չորս ծագերէն հաւարած ուսանողներու եւ մտաւորականներու հետ:

Լենոն Ա. կայսր իր նախկին մեծաւորին եւ հովանաւորին՝ զօրավար Ասփարի գերմանական զօրագուններուն ուժը հակակշռելու համար Վիլիլիոյ հիւսիսային Տաւրոսի Լեոնային գաւառներէն Իսաւրիայէն զօրագուններ Պոլիս տեղափոխեց: Իսաւրիացիները քաջ եւ պատերազմիկ հաւաքակազմներէն մըն էին, որոնք երկար ժամանակ իբրեւ վարձակներ ծառայած էին Հռոմի կայսրերուն: Յիշենք, որ ներկայիս Իսաւրիա քաղաքը Ջենգիմպար Գալա կը կոչուի: Անցեալին Իսաւրիոյ շրջանին կեդրոնը Սելեւկիա քաղաքն էր: Նշենք նաեւ, որ

Իսաւրիացիներ հետագային 717ին տիրացան Բիւզանդիոնի գահին. Իսաւրիական հարստութիւնը գոյատեւեց մինչեւ 802: Ջօրավար Ասփարի սպանութենէն ետք, 471ին, Լենոն Ա. յաջողեցաւ ինքնիշխան կերպով դեկալարել կայսրութիւնը:

Լենոն Ա. կայսր 473 Հոկտեմբերին իրեն յաջորդ նշանակեց բողոք (աղջկան զաւակը)՝ Լենոն Բ., որմէ քանի մը ամիս ետք, 3 Փետրուար 474ին կայսրը մահացաւ: Մեծ հօր կայսերական կտակին համաձայն, գահ բարձրացաւ Լենոն Բ., իսկ քանի մը օր ետք, 9 Փետրուար 474ին հայրը Ջենոն փոխ կայսր հռչակուեցաւ:

Այս ժամանակ հայ ուխտապահ նախարարները Վահան Մամիկոնեանի շուրջ իմբուած՝ պարսիկներուն դէմ ապստամբութեան համար նախապատրաստական մեծ աշխատանք կը տանէին: Լենոն Բ. զինուորական օգնութիւն խոստացաւ հայերուն, բայց յետոյ դրժեց խոստումը: Ան քանի մը ամիս միայն գահակալեց եւ 10 Նոյեմբեր 474ին մահացաւ:

ՋԵՆՈՆ ԿԱՅՍԵՐ ԳԱՂԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԵՏՔ ՀԱՅ ՆԱԽԱՐԱՐՆԵՐՈՒ ՈՒ ԶԵՆՈՒՈՐԱԿԱՆՆԵՐՈՒ ԻՐԱՍՏԱՌԹԵԱՆՑ ՍԱՀՄԱՆՓՈՒՄՆԵՐ

Լենոն Բ. ի մահէն ետք անոր յաջորդեց հայրը՝ Ջենոն. որ արդէն փոխ կայսրի աստիճան կը վայելէր: Ջենոն կայսր իսաւրիացի էր եւ 466ին կամ 467ին ամուսնուեցաւ էր Լենոն Ա. ի աղջկան՝ Արիանտի հետ:

Ջենոն կայսեր առաջին գործերէն մէկը եղաւ Ասփարիէի վանտալներուն հետ խաղաղութիւն հաստատել: Բայց այնուհետեւ նոր դժուարութիւններ եւ ներքին տագնապներ յառաջ եկան, որոնք խորապէս ջրկեցեցին կայսրութիւնը: Արդարեւ, տակաւին հազար գահակալած, անոր մօտիկ գործակիցն ու հարեանակիցը՝ իսաւրիացի Իլլոս եւ Լենոն Ա. կայսր աներորդին՝ Վասիլիսկոս պետական հարուած մը կազմակերպեցին եւ գահընկէց հռչակեցին Ջենոն կայսրը, որ իր հետեւորդներով միասին Իսաւրիա քստրուեցաւ: Վասիլիսկոս եւ Իլլոս միասնաբար գրաւեցին իշխանութիւնը, բայց յետոյ Վասիլիսկոս իր ձեռքերուն մէջ կեդրոնացուց իշխանութիւնը, ինքզինք կայսր հռչակեց եւ քսան ամիս իշխեց Պոլսոյ մէջ. ան իր կրօնական համոզումներուն համար չսիրուեցաւ ժողովուրդին կողմէ. իր կարգին, Իլլոս ժամանակ մը ետք փոխեց իր դիրքը եւ հակադրուեցաւ Վասիլիսկոսի՝ այս անգամ զօրավիզ կանգնելով քստրական կայսր, որուն շնորհիւ Ջենոն 476 Օգոստոսին վերադարձաւ Պոլիս եւ վերագրուեց իշխանութիւնը:

Այս ժամանակ բունցալ պայքար մը ծայր առաւ միաբնակ եւ երկաբնակ (քաղկեդոնական) եկեղեցիներուն միջեւ. եկեղեցեցան պայքարները մեղմացնելու, միաբնակներն ու երկաբնակները հաշտեցնելու եւ այդպէսով ալ կայսրութեան միասնականութիւնը ապահովելու նպատակով Ջենոն կայսր 482ին հրապարակեց «Հենոսիկոն» (միաբնակութեան օրհր. հայերէն թարգմանութիւնը՝ «Գիրք Թղթոց») անիկա առաջին հերթին Եգիպտոսի եկեղեցիին ուղղուած էր՝ իբրեւ կայսրութեան սահմաններուն մէջ գործող միաբնակ ամենեւեմ մեծ եւ զօրաւոր եկեղեցիին:

Փոքր Ասիոյ մէջ 484ին մեծ ապստամբութիւն մը բռնկեցաւ Ջենոն կայսր դէմ. այս ապստամբութեան գործուն մասնակցութիւն բերին նաեւ Հայաստանի հարաւային նահանգներու՝ Անձիտի, Անգեղ Տան, Հաշտեանքի, Մոփքի եւ Մոփք Մահուսիի նախարարները: Ջենոն կայսր չորս տարուան պայքարէ ետք, մինչեւ 488, զինու զօրութեամբ, արեւմ մէջ խեղդեց ապստամբութիւնը. ըմբոսներէն շատեր ձերբակալուեցան եւ գլխատուեցան:



Ռերա կղզին Եգէական ծովուն մէջ:

Ապստամբութեան ճնշումէն ետք Ջենոն կայսր նախարարներու իշխանութեան ժառանգական իրաւունքը ջնջեց եւ կարգադրեց, որ նախարարութիւններուն կառավարչութիւնը Բիւզանդիոնի պետական տնօրինութեան յանձնուի:

Նոյն ժամանակ, 488ին Ջենոն կայսր համաձայնագիր կնքեց օսբգոթերուն հետ, եւ ինքզինք թագաւոր հռչակած Օտոքարը վար առնելով՝ 489ին Թեոտորիք օսբգոթերու ղեկավար եւ իտալիոյ թագաւոր հռչակեց: Ջենոն կայսր նաեւ ծրագրեր մշակեց օսբգոթերը ցրուելու դեպի Արեւելեան Եւրոպայի տարբեր երկրամասեր:

Ջենոն կայսր նաեւ փոփոխութեան ենթարկեց կայսերական պահակազօրքին՝ սրուարիոսի կազմը. արդարեւ, մինչեւ այդ ժամանակ իրենց սեփական պահակազօրքին անդամները



Ռոտոս կղզին Լիմոսոս պարսպապատ աւանը, կառուցուած՝ խաչակիրներուն կողմէ:

կայսրերը հայ զինուորականներէն կ'ընտրէին՝ անոնց քաջութեան եւ զինուորական վաստակին համաձայն. եւ լաւ ալ կը վարձատրէին զանոնք: Բայց այնուհետեւ Ջենոն կայսր կարգադրութեամբ սրուարիոսին կազմ փոփոխութեան ենթարկուեցաւ. անոր հայ զինուորներէն շատեր արձակուեցան եւ յոյն զինուորներով փոխարինուեցան. եւ թիւն ալ չորս հազարի բարձրացաւ: Թեւ զգալի թիւով հայ զինուորներ կը մնային, բայց դրամի ուժով անոր մէջ ընդունուեցան նաեւ անընդունակ, զինուորական արեւմտեան անտեղեկ եւ անփորձ մարդիկ: Յիշենք, որ Պոլսոյ մէջ, կայսերական պալատին եւ ռազմագիտական կետերու վրայ տեղադրուած կայսերական պահակազօրքը վճարակաւ դերակատարութիւն ուներ վարչակարգի պաշտպանութեան, արքունիքի ներքին հարցերուն, ինչպէս նաեւ գահակալական կոլիւններուն ու ներքին խռովութիւններուն մէջ: Ջենոն կայսր մահացաւ 9 Ապրիլ 491ին:

ՄԱՍՏԱՍՄԻՈՍ ԿԱՅՍԵՐ ԺԱՄԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ջենոն կայսր մահէն ետք գահ բարձրացաւ Անաստասիոս: Մնած՝ մօտաւորապէս 430ին, Տիրաքիոմ, ան իբրեւ ինքնակալ ծառայած էր Ելեւմուքի սպասարկութեան մէջ եւ Ջենոն կայսր անձնական թիկնապահը եղած էր: Ջենոն կայսր մահէն ետք անոր արքային՝ Արիան-

տի բիւզանդացի վարձակառու Անաստասիոս կայսրը ընտրուեցաւ, որմէ ետք Արիանտ ամուսնացաւ Անաստասիոսի հետ:

Գահ բարձրանալէն ետք (491) Անաստասիոս ջնջեց պետական պաշտօնները վաճառելու դրութիւնը. բարեկարգեց տուրքերու դրութիւնը եւ պետական կառուցը: Անոր առաջին գործերէն մէկը եղաւ նաեւ Ջենոնի գլխաւոր նեցուկը հանդիսացող իսաւրիացի զինուորականներն ու պաշտօնատարները չեզոքացնել եւ հեռացնել Պոլիսէն:

Արտաքին քաղաքականութեան մէջ ան 497ին վերականգնեց օսբգոթերու իշխանութիւնը Իտալիոյ մէջ. բայց յետոյ օսբգոթ երկու տիրակալներ անոր դէմ ելան, որուն պատճառով ան 508ին մեծ արշաւախումբ մը կազմակերպեց Իտալիոյ դէմ:

Անաստասիոս կայսր մերժեց մասնակցութեան իր բաժինը վճարել կովկասեան դուռներու պաշտպանութեան համար յատկացուած ծախսերուն բարբարոս բաֆառաշրջիկ ցեղախումբերու դէմ, որոնք կ'արշաւէին Պարսկաստանի եւ Բիւզանդիոնի վրայ: Այս պատճառով 502ին մեծ պատերազմ մը ծագեցաւ Բիւզանդիոնի եւ Պարսկաստանի միջեւ: Պատերազմին գլխաւոր բատերաբեմը դարձաւ Հայաստանը. պարսիկներ անցան 442ի դաշինքով երկու կայսրութեանց միջեւ հաստատուած սահմանը, գրաւեցին Թեոդոսուպոլիսը (Կարին), Ամիդը եւ ռազմագիտական կարեւոր կարգ մը բերդեր: Բիւզանդական բանակը բունցալ մարտերէ մեծ կորուստներ տալէ ետք նահանջեց: Կոլիւններ հայկական հողի վրայ տեւեցին տարիներ: Անաստասիոս ստիպուած հաշտութիւն ինկրեց եւ 505ին դաշինք կնքեց Պարսկաստանի հետ՝ արքայից արքային խոստանալով վճարել իր բաժին գումարը:

Պարսկական բանակին բիւզանդական սահմաններէն (արեւմտեան Հայաստանէն) հեռացումէն ետք, երբ վերահաստատուեցաւ նախապատերազմական վիճակը, Անաստասիոս աշխատեցաւ անելի ամրապնդել իր իշխանութիւնը արեւմտեան Հայաստանի մէջ. առաջին հերթին ան Մծբին քաղաքին մօտակայքը, անոր դիմացը՝ Իսաւրիոցը կառուցեց, ինչպէս նաեւ Թեոդոսուպոլսոյ պաշտպանական ամրութիւնները ամրապնդեց:

Անաստասիոս կայսր իր նախորդին՝ Ջենոնի նման խորապէս համոզուած միաբնակ էր եւ հակադրուած յոյն եւ լատին եկեղեցիներուն, ու կը շարունակէր հուլանադոնի ու իրախուսել հակաքաղկեդոնական շարժումը, այն հասկացողութեամբ, որ տարբեր մշակութիւններով, հոգեբանութեամբ ու տարբեր պատմութիւններով ազգերը նոյնիսկ բնութեամբ միասնակաշխարհահայեցողի մէջ միացնելը անհնարելի էր: Այնպէս որ, Անաստասիոս ազատութիւն տուաւ. որ Քաղկեդոնի հակառակ վարդապետութիւն ունեցող եկեղեցիները իրենց սկզբունքները պաշտպանեցին հրապարակաւ եւ արտապաշտութեան միջոցներով: Մտածուեցաւ նոյնիսկ տիեզերական նոր ժողով գումարելու եւ Քաղկեդոնի ժողովը դատապարտելու մասին:

Անաստասիոսի այս քաղաքականութիւնը մեծ դժգոհութեան պատճառ դարձաւ Պոլսոյ եւ ընդհանուր առմամբ Եւրոպական նահանգներուն մէջ, բայց Եգիպտոսի, Սուրիոյ եւ հայաբնակ նահանգներուն մէջ իրադեցուց կացութիւնը:

Այս պայմաններուն տակ հայ եկեղեցին, Բաբգէն Ա. Ռմմեսցի կաթողիկոսին նախաձեռնութեամբ 506ին գումարեց Դուլիսի ժողովը, որուն մասնակցեցան նաեւ լրաց եւ աղուանից եկեղեցիները եւ Պարսկաստանի հակաքաղաքական հոգեւորականներէն պատգամաւորութիւն մը. այս ժողովին դատապարտուեցան քաղկեդոնականութիւնն ու նետորակաւորութիւնը եւ վերահաստատուեցաւ հայ եկեղեցու միաբնակ ուղղափառ դաւանանքը:

Այս ժամանակ պուլկարներ եւ սլաւական տարբեր ցեղեր տեւաբար կը ներխուժէին Բիւզանդիոնի խորքերը եւ մինչեւ Պոլսոյ դուռերը կը հասնէին՝ տեւաւ սպառնալիք մը մնալով մաշտաքաղաքին եւ կայսրութեան ապահովութեան: Ի վերջոյ, Պոլսը անոնց յարձակումներէն պաշտպանելու համար Անաստասիոս 512ին պարսպապահ կառուցեց Սեւ ծովէն մինչեւ Մարմարա ծով երկարութեամբ:

Միւս կողմէ, Թրակիոյ զինուորական հրամանատարը Վիքտորիան տեւաբար ապստամբ վիճակի մէջ կը գտնուէր եւ տեւական յարձակումներով մեծ կորուստներ կը պատճառէր կայսերական բանակներուն: Անաստասիոս մեծ զօրք դրկեց անոր դէմ եւ 515ին վերջնականապէս նուաճեց զայն:

Անաստասիոս իր եղբորորդիները սկսաւ պատրաստել իբրեւ իրեն յաջորդ, բայց 9 Յունիս 518ին մահացաւ եւ անոր յաջորդեց իլլիրիացի եօթնամասնական Յուստինոս Ա., որ պալատի պահակազօրքին հրամանատարն էր կոմսի տիտղոսով:

ԱՍՊԵՏ ՍԱՆՃԻԿԵՆ

ՀԱՄԲԻԿ ՍԱՍՈՒՆԵԱՆԻ ՀԱՍՅԵՆ
HAMPIG SASSOUNIAN C - 88440
CSP - L.A.C. D -5- 232 44750
60-TH ST. WEST LANCASTER,
CA, 93536
USA

